ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, Կոտայքի մարզ, Գառնի համայնք, Ս. Շահումյան 4,
Garnihamaynq@mail.ru, **հեռ. +37441125156**

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 04

24/11/2023թ. **գ.Գառնի**

2023 թվականի նոյեմբերի 24-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Կոտայքի մարզի Գառնի համայքի վարչական շենքում տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի ավագանու «Գառնի համայնքում 2024 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակները, տեղական տուրքերի, վճարների և համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» որոշման նախագծը հաստատելու վերաբերյալ հանրային քննարկումը:

Բաց լսումների բացման խոսքով հանդես եկավ աշխատակազմի քարտուղար՝ Լիպարիտ Թադևոսյանը, ով մասնավորապես նշեց, որ 2023 թվականի նոյեմբերի 24-ի բաց լսումների համար հիմք է հանդիսացել համայնքի ղեկավարի 2023 թվականի նոյեմբերի 02–ի № 1070 որոշումը, ըստ որի համայնքապետարանի տեղեկատվական կառավարման համակարգում տրվել է հրավերի հայտարարություն:

Մուտքի խոսքով հանդես եկավ ՀՀ Կոտայքի մարզի Գառնի համայքի ղեկավար Տիգրան Պողոսյանը, ապա խոսքը տրամադրեց «Ֆինանսատնտեսագիտական եկամուտների հաշվառման և հավաքագրման» բաժնի պետ՝ Արփենիկ Բաղդասարյանին:

Լսումների ընթացքում, «Ֆինանսատնտեսագիտական եկամուտների հաշվառման և հավաքագրման» բաժնի պետ՝ Արփենիկ Բաղդասարյանի կողմից ներկայացվեց Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի ավագանու «Գառնի համայնքում 2024 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակները, տեղական տուրքերի, վճարների և համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ ընդհանրական տեղեկատվություն:

Գառնի համայնքի ղեկավարի տեղակալ Կարեն Գաբրիելյանը առաջարկություն ներկայացրեց տեղական տուրքերում կատարել փոփոխություն:

Խոսվեց նաև Գառնի համայնքում 2024 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակները, տեղական տուրքերի, վճարների և համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը հավաքագրելու հետ կապված աշխատանքների արդյունավետության մասին:

Այնուհետև, աշխատակազմի քարտուղար՝ Լիպարիտ Թադևոսյանի կողմից ներկաներին ներկայացվեց, որ Գառնի համայնքում 2024 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակները, տեղական տուրքերի, վճարների և համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ կամ առարկություններ՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից չեն ներկայացվել:

Տեղի ունեցավ նաև մտքերի փոխանակություն Գառնի համայնքի ղեկավար՝ Տ. Պողոսյանի և լսումների ներկաների միջև:

Բաց լսումները ավարտվեցին ժամը 12.[45]-ին :

Լսելով վերոգրյալը, հանրային լսման մասնակիցները առարկություններ չհայտնեցին և կարևորելով ծրագրերի իրականացումը, տվեցին իրենց համաձայնությունը՝ «Գառնի համայնքում 2024 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակները, տեղական տուրքերի, վճարների և համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» որոշման նախագծը հաստատելուն:

Լսումների կազմակերպիչ՝ **Լիպարիտ Թադևոսյան**

Համայնքի ղեկավար՝ **Տիգրան Պողոսյան**

«Ֆինանսատնտեսագիտական եկամուտների հաշվառման և հավաքագրման» բաժնի պետ՝ **Արփենիկ Բաղդասարյան**

Խորհրդակցական մարմնի անդամ՝ **Գևորգ Մարտիրոսյան**

Արձանագրող՝ **Հասմիկ Գրիգորյան**